

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2010 թվականի հունիսի 18)

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում՝ Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի վրա,

համաձայնեցին հետեյալի մասին.

Հոդված 1

Կողմ պետությունների մաքսային մարմինները, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, չեն կիրառում մաքսային հսկողության որոշակի ծեեր:

Հոդված 2

Մաքսային զննումից ազատվում են հետեյալ անձանց անձնական ուղեբեռները՝

1) Մաքսային միության անդամ պետությունների նախագահների, որոնք դադարեցրել են իրենց իրավասությունները, եւ նրանց ուղեկցող ընտանիքի անդամների,

2) Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախագահի, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի նախագահի, Ռուսաստանի

Դաշնության Բարձրագույն արբիտրաժի դատարանի նախագահի, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնային խորհրդի անդամների, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների, եթե նշված անձինք անցնում են մաքսային սահմանով՝ իրենց ծառայողական պարտականությունները կամ պատգամավորական իրավասությունները կատարելու առնչությամբ,

3) Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահի, Բելառուսի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, Բելառուսի Հանրապետության տնտեսական դատարանի նախագահի, Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի՝ հանրապետության խորհրդի անդամների, Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Ներկայացուցիչների պալատի պատգամավորների, եթե նշված անձինք իրենց ծառայողական պարտականությունները կամ պատգամավորական իրավասությունները կատարելու առնչությամբ անցնում են մաքսային սահմանով,

4) Ղազախստանի Հանրապետության պետական քարտուղարի, Ղազախստանի Հանրապետության Նախագահի վարչակազմի ղեկավարի, Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի նախագահի, Ղազախստանի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահի, Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազի, Ղազախստանի Հանրապետության Ազգային բանկի նախագահի, Ղազախստանի Հանրապետության Ազգային անվտանգության կոմիտեի նախագահի, Ղազախստանի Հանրապետության նախագահի վարչական հարցերով կառավարչի, Ղազախստանի Հանրապետության Պահպանության ծառայության ղեկավարի եւ Ղազախստանի Հանրապետության պառլամենտի պատգամավորների, եթե նշված անձինք իրենց ծառայողական պարտականությունները կամ պատգամավորական իրավասությունները կատարելու առնչությամբ անցնում են մաքսային սահմանով:

Հոդված 3

Կողմերի պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 4

Կողմերի միջև ծագող՝ սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի միջև անցկացվող խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով:

Եթե վեճի կողմերը բանակցությունների ու խորհրդակցությունների միջոցով վեճը չեն կարգավորում դրանց անցկացման վերաբերյալ՝ վեճի մի կողմից վեճի մյուս կողմին հասցեագրված պաշտոնական գրավոր դիմումը ներկայացնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը, եթե վեճի կարգավորման եղանակների վերաբերյալ վեճի կողմերի միջև այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման եւ ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի

պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն
ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի հունիսի 18-ին,
մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության
հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված
պատճենը:

(Ստորագրություններ)